Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵՁՈՒ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILINGUAL BULLETIN

1: Today's Scripture Reading, 26th January 2025 Bulletin 5/2025

Second Sunday after Nativity

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 1 ՏԻՄՈԹԷՈՍ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 4:12-5:10

Ո՛չ մէկը թող արհամարհէ քու երիտասարդութիւնդ, հապա տիպա՛ր եղիր հաւատացեալներուն՝ խօսքով, վարքով, սիրով, հաւատքով ու մաքրակեցութեամբ: Մինչեւ որ գամ՝ ուշադի՛ր եղիր կարդալու, յորդորելու, սորվեցնելու: Անհոգ մի՛ ըլլար քու մէջդ եղած շնորհին հանդէպ, որ մարգարէութեամբ տրուեցաւ քեզի՝ երէցներուն ձեռնադրութեամբ: Խոկա՛ այդ բաներուն մասին եւ զբաղէ՛ ատոնցմով, որպէսզի քու յառաջդիմութիւնդ երեւնայ ամենուն: Ուշադի՛ր եղիր դուն քեզի ու վարդապետութեան, եւ մի՛շտ յարատեւէ ատոնց մէջ. քանի որ այդպէս ընելով՝ պիտի փրկես թէ՛ քեզ, թէ՛ քեզ լսողները:

Մի՛ սաստեր տարեցը, հապա յորդորէ՛ զայն՝ հօր մը պէս. երիտասարդները՝ եղբայրներու պէս, տարեց կիները՝ մայրերու պէս, դեռահասակները՝ քոյրերու պէս, բոլորովին մաքրակեցութեամբ:

Պատուէ՛ այն այրիները՝ որ ի՛րապէս այրի են: Բայց եթէ այրի մը ունի զաւակներ կամ թոռներ, անոնք թող սորվին նախ իրենց տան մէջ բարեպաշտութիւն ցոյց տալ, ու փոխարէնը հատուցանել իրենց ծնողներուն. որովհետեւ ա՛յդ է բարին եւ ընդունելին Աստուծոյ առջեւ: Իսկ ան որ ի՛րապէս այրի է ու մինակ մնացած, կը յուսայ Աստուծոյ, եւ գիշեր-ցերեկ կը յարատեւէ աղերսանքի ու աղօթքի մէջ. մինչդեռ փափկասէր այրին մեռած է, թէպէտ կ'ապրի: Պատուիրէ՛ այս բաները, որպէսզի անարատ ըլլան: Բայց եթէ մէկը չի հոգար իրենները ու մա՛նաւանդ իր ընտանիքը, ան ուրացած է հաւատքը, եւ աւելի գէշ է՝ քան անհաւատ մը:

Timothy Learning the Scriptures

Իբր այրի թող դասուի ա՛ն՝ որ վաթսուն տարեկանէն կրտսեր չէ, մէկ մարդու կին եղած է, ու բարի գործերով վկայուած. եթէ զաւակներ մեծցուցած է, հիւրեր ընդունած, սուրբերուն ոտքերը լուացած, տառապեալներուն նպաստած, ամէն բարի գործի հետամուտ եղած:

The Epistle of St Paul to the 1 Timothy 4:12-5:10;

Don't let anyone look down on you because you are young, but set an example for the believers in speech, in conduct, in love, in faith and in purity. Until I come, devote yourself to the public reading of Scripture, to preaching and to teaching. Do not neglect your gift, which was given you through prophecy when the body of elders laid their hands on you.

Be diligent in these matters; give yourself wholly to them, so that everyone may see your progress. Watch your life and doctrine closely. Persevere in them, because if you do, you will save both yourself and your hearers.

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

Widows, Elders and Slaves

Do not rebuke an older man harshly, but exhort him as if he were your father. Treat younger men as brothers, older women as mothers, and younger women as sisters, with absolute purity.

Give proper recognition to those widows who are really in need. But if a widow has children or grandchildren, these should learn first of all to put their religion into practice by caring for their own family and so repaying their parents and grandparents, for this is pleasing to God. The widow who is really in need and left all alone puts her hope in God and continues night and day to pray and to ask God for help. But the widow who lives for pleasure is dead even while she lives. Give the people these instructions, so that no one may be open to blame. Anyone who does not provide for their relatives, and especially for their own household, has denied the faith and is worse than an unbeliever.

No widow may be put on the list of widows unless she is over sixty, has been faithful to her husband, and is well known for her good deeds, such as bringing up children, showing hospitality, washing the feet of the Lord's people, helping those in trouble and devoting herself to all kinds of good deeds.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 3 :13-21

Ո՛չ մէկը երկինք բարձրացաւ, բացի անկէ՝ որ երկինքէն իջաւ, մարդու Որդին՝ որ երկինքն է: Եւ ինչպէս Մովսէս բարձրացուց օձը անապատին մէջ, այնպէս պէտք է որ բարձրանայ մարդու Որդին. որպէսզի ո՛վ որ հաւատայ անոր՝ չկորսուի, հապա ունենայ յաւիտենական կեանքը:

Որովհետեւ Աստուած ա՛յնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ անգամ տուաւ իր միածին Որդին, որպէսզի ո՛վ որ հաւատայ անոր՝ չկորսուի, հապա ունենայ յաւիտենական կեանքը: Քանի որ Աստուած աշխարհ ղրկեց իր Որդին՝ ո՛չ թէ աշխարհը դատապարտելու, հապա՝ որպէսզի աշխարհը փրկուի անով: Ա՛ն որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր, իսկ ա՛ն որ չի հաւատար՝ անիկա արդէն դատապարտուած է, որովհետեւ չհաւատաց Աստուծոյ միածին Որդիին անունին: Սա՛ է դատապարտութիւնը, որ լոյսը աշխարհ եկաւ, բայց մարդիկ սիրեցին խաւարը՝ փոխանակ լոյսին, քանի որ իրենց գործերը չար էին: Որովհետեւ ո՛վ որ չարիք կը գործէ, անիկա կ'ատէ լոյսը եւ չի գար լոյսին քով, որպէսզի չկշտամբուին իր գործերը: Բայց ա՛ն որ կը կիրարկէ ճշմարտութիւնը՝ կու գայ լոյսին քով, որպէսզի իր գործերը յայտնաբերուին թէ գործուեցան Աստուծմով»:

The Holy Gospel of Jesus Christ according to John 3:13-21

No one has ever gone into heaven except the one who came from heaven—the Son of Man. [e] Just as Moses lifted up the snake in the wilderness, so the Son of Man must be lifted up, [f] that everyone who believes may have eternal life in him." [g]

For God so loved the world that he gave his one and only Son, that whoever believes in him shall not perish but have eternal life. For God did not send his Son into the world to condemn the world, but to save the world through him. Whoever believes in him is not condemned, but whoever does not believe stands condemned already because they have not believed in the name of God's one and only Son. This is the verdict: Light has come into the world, but people loved darkness instead of light because their deeds were evil. Everyone who does evil hates the light, and will not come into the light for fear that their deeds will be exposed. But whoever lives by the truth comes into the light, so that it may be seen plainly that what they have done has been done in the sight of God.

Dear Parishioners and Armenian Community Members:

The Sunday collection plate circulating during Divine Liturgy is for all to contribute each Sunday in order to have a thriving church. Your donation, participation and support is vital, not only by attending the church but also with your time and financial contribution to our church. Please be generous in order for us to keep the doors open and provide all the services.

Ս. Աթանաս և Ս. Կյուրեղ հայրապետների հիշատակության օր

Ս. Աթանաս և Ս. Կյուրեղ հայրապետներն Ընդհանրական Եկեղեցու ամենակարկառուն գործիչներից են, ովքեր իրենց ողջ կյանքն ապրեցին հանուն քրիստոնեական հավատի ուղղափառության հաստատման ու տարածման՝ ընդդեմ մոլար ըմբռնումների և ուսմունքների:

Ս. Աթանաս հայրապետը (295-373 թթ.) ծնվել է Ալեքսանդրիայում՝ հույն քրիստոնյա ընտանիքում: Բարձրագույն կրթություն ստացել է հայրենի քաղաքի հռչակավոր աստվածաբանական ճեմարանում: Սարկավագ ձեռնադրվելով տեղի պատրիարք Ալեքսանդր Ալեքսանդրացու կողմից, իբրև նրա անձնական քարտուղար՝ մասնակցել է Նիկիայի 325 թվականի տիեզերաժողովին և լուրջ հակահարված հասցրել Արիոսին ու նրա հետևորդներին, ովքեր մերժում էին Քրիստոսի աստվածային բնությունը՝ Նրան համարելով արարած: Ի հակադրություն այս սխալ վարդապետության՝ Աթանասը հաստատում է Քրիստոսի Աստված լինելու իրողությունը և փրկությունը տեսնում է Աստծո հետ մարդկային բնության միավորման մեջ, ինչը հնարավոր է միայն Աստծո մարդացմամբ: Փրկությունը, ըստ Աթանասի բանաձևման, ոչ այլ ինչ է, եթե ոչ աստվածացում. «Աստված մարդացավ, որպեսզի մարդն աստվածանա»: Աստվածացումն Աստծուն որդեգրվելն է, «որպեսզի մարդկանց որդիները դառնան Աստծո որդիներ»: 328 թվականին բարձրանալով պատրիարքական գահին, Ս. Աթանասը հետագա իր ողջ կյանքի ընթացքում անդադար պայքարում է արիոսական հերձվածի դեմ, պաշտպանում նիկիական ուղղափառ դավանանքը: Ենթարկվելով հալածանքների՝ իր եպիսկոպոսական 47 տարիներից 15-ն անցկացրել է աքսորում: Սակայն ճշմարտության հաստատման իր գերմարդկային ջանքերը տալիս են բարի պտուղներ. Աթանասի մահից 7-8 տարիներ հետո՝ Կ. Պոլսի 381 թվականի տիեզերաժողովում, վերջնականապես ամրագրվում է Աթանասի վարդապետությունը: Մեծ է Աթանասի վաստակը նաև վանականության զարգացման գործում:

Ս. Կյուրեղ Ալեքսանդրացի հայրապետն Ալեքսանդրյան աստվածաբանական դպրոցի փայլուն ներկայացուցիչներից մեկն է: Ծնվել է 380 թվականին, Թեոփիլոս պատրիարքի եղբորորդին է, որին հաջորդել է 412 թվականին: Կ. Պոլսի պատրիարք Նեստորի դեմ պայքարել է ուղղափառ դավանանքի համար, որի պատճառով էլ Թեոդորոս Բ կայսրը 431 թվականին Եփեսոսում հրավիրել է երրորդ տիեզերական ժողովը: Ժողովի ընթացքում Նեստորի ուսմունքը դատապարտվել է, իսկ Մարիամի համար ընդունվել է «Աստվածածին» անվանումը: Կյուրեղի նշանավոր բանաձևը՝«Մի բնութիւն Բանին մարմնացելոյ», դարձել է Հայ Առաքելական Եկեղեցու՝ Քրիստոսի բնության վարդապետության հիմնաքարը:

Commemoration of Patriarchs St. Athanasius and St. Cyril of Alexandria

Patriarchs St. Athanasius and St. Cyril are among the most prominent figures of the Universal Church, who devoted their lives to the promulgation of the orthodoxy of Christianity, and the struggle against false conceptions and erroneous teachings.

St. Athanasius (295-373 A.D.) was born in Alexandria, to a Greek Christian family. He received his higher education in the famous Theological School of Alexandria. He was ordained to the diaconate by Patriarch Alexander of Alexandria, and participated in the Ecumenical Council of Nicea in 325, as the Patriarch's personal secretary. During the council he decisively defeated Arius and his followers who denied the Divine nature of Christ and purported that He was a created being. In his argument St. Athanasius stated the reality of Christ being God and explained the salvation in combining the human nature of Jesus with God, which is possible only through His incarnation. According to the formulation of St. Athanasius, salvation is nothing else but theosis – being adopted by God. Athanasius stated that God became incarnate, "so that sons of mortal men should become sons of God."

In 328, St. Athanasius became Bishop of Alexandria. He continued to struggle against Arianism and forcefully defended the Nicene Orthodox teaching. Having been subjected to repeated persecutions, he spent 15 of his 47-year episcopal service in exile. His heroic efforts bore fruit,

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

and eight years following his death his teachings were adopted by the Ecumenical Council of Constantinople, in 381. St. Athanasius made very significant contributions to the development of monastic life as well.

Patriarch St. Cyril of Alexandria is one of the brilliant representatives of the Alexandrian Theological School. He was born in 380, and was the nephew of Patriarch Theophilus, whom he succeeded in 412. He struggled against Nestorius, the Patriarch of Constantinople, for the preservation of orthodox teaching. It was for this purpose that Emperor Theodoros II convened the Third Ecumenical Council in Ephesus, in 431. During the Council, Nestorius and his teachings were criticized and condemned, and the formulation of "Theotokos" (Birthgiver to God) was adopted by the Church as it related to St. Mary. The famous formulation of St. Cyril: "The one incarnate nature of God the Word", has become the cornerstone of the Armenian Church regarding the nature of Christ.

Dear Parishioners
and
Armenian Community Members

The St Yeghiche Armenian Church's 2025 year calendar is out, with both Armenian Religious Feast dates and UK holiday dates.

These are available at St Yeghiche Armenian Church front desk,
from Sunday 1st December 2024,
and till the stock last.

These are great gift idea for New Year
To give to your friends and relatives.

We encourage every Armenian Household to have one, and bring our Lords blessing to your home and Family.

Thank you for your generous support
St Yeghiche Armenian Church Parish Council

We will study the Holy Scriptures, share reflections, and enjoy food and drinks in a welcoming atmosphere.

Come as you are, and let us grow in faith, prayer, and fellowship together.

BIBLE STUDIES

WITH FR NSHAN

EVERY WEDNESDAY | 7:30 P.M.

107 EALING ROAD, BRENTFORD TW8 0LF

info@armenianchurch.org.uk

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն

«Եթէ ոտքդ յետ քաշես եւ սրբութեան օրը քո ուզածը չկատարես, զուարճութեան շաբաթները համարես Աստծուն նուիրուած եւ փառաւոր, ոտքդ դուրս չդնես գործի համար ու քո բերանով բարկութեան ոչ մի խօսք չասես, այն ժամանակ կարող ես ապաւինել Տիրոջը» (Ես.58:13):

Աստծուն սիրող սիրելի եղբայրներ եւ քոյրեր,

Մարդկանց մեծ մասը փորձում է նախապէս ծրագրել իր օրը, շաբաթը, ամիսը կամ տարին: Կարեւոր առիթներ կան, որոնց համար արդեն ամիսներ առաջ պայմանաւորւում ենք, գրանցում մեր օրագրի մէջ եւ կանխաւ արդեն որոշում մեր անելիքը: Երկրներ կան, որ ազգային եւ պետական տօների կամ հոգեւոր մեծ իրադարձութիւնների տօնական յիշատակի յստակ սահմանուած օրեր ունեն: Մենք մեր յետագա բոլոր պայմանաւորուածութիւնները յարմարեցնում ենք իրենց օրացոյցին՝ ըստ երկրի եւ կարգերի: Այն ազդում է հասարակական բոլոր շերտերի կեանքի վրայ՝ սկսած աշակերտական նստարաններից մինչեւ մեծ պետական եւ անգամ միջազգային ձեռնարկութիւնների օրակարգ:

Տօնական օրերի նման դասաւորութեան համար հիմք են պատմական կարեւոր իրադարձութիւնները, այս կամ այն երկրի առանձնայատկութիւնները՝ կլիման, գարնան գալուստն ու սերմնացանութիւնը, բերքահաւաքի շրջանը եւն: Բայց, հնուց ի վեր, տօների ամենալուրջ եւ խորքային աղբիւրը հաւատքային եւ կրօնական միտքն է, որ կանոնակարգում է հաւատքային ապրումը, համընդհանուր դարձնում հոգեւոր ուրախութիւնը կամ բաձրաձայնում բոլորի մօտ առկայ կրօնական զգացումը: Աստուածաշունչի առաջին գիրքն արդեն խօսում է տօնական օրերի եւ տարիների մասին: ***«Թող լուսատուներ լինեն երկնքի տարածութեան մէջ, որպէսզի լուսաւորեն երկիրը եւ իրարից բաժանեն ցերեկն ու գիշերը: Դրանք թող լինեն, որպէսզի ցոյց տան տարուայ եղանակները, տօնական օրերն ու տարիները, թող լինեն, ծագեն երկնքի տարածութեան մէջ՝ երկիր լուսաւորելու համար»*** (Ծննդ.1:14-15):

Այն, որ օրացուցային նման կարեւոր առիթները հոգեւոր ակունք ունեն, լաւագոյնս տեսանելի են Աստուածաշունչ Մատեանի Հին Կտակարանի գրքերում, մանաւանդ Հնգամատեանի մէջ, երբ Մովսէսի միջոցով Աստուած տալիս է մարդկանց կեանքը կարգաւորող պատուիրաններն ու կանոնները: Օրերի բաշխման առումով առաջինը Տասնաբանեայ պատուիրանների մէջ հանդիպող հանգստի կամ սուրբ օրուան է վերաբերում. վեցօրեայ արարչութիւնից յետոյ եօթներորդ օրը սահմանւում է իբրեւ "***շաբաթ***" կամ "***հանգիստ***": ***«Յիշի՛ր շաբաթ օրը, որպէսզի սուրբ պահես այն: Վեց օր պիտի աշխատես եւ պիտի կատարես քո բոլոր գործերը: Եօթներորդ օրը քո Տէր Աստծու հանգստեան օրն է»:*** Յետաքրքիր է, որ սա տարածւում էր ոչ միայն ուխտը կապող ժողովրդի վրայ, այլեւ նրա աղախնի, տան անասունների վրայ, անգամ հիւրաբար ներկայ եղող օտարականի ու պանդուխտի վրայ (Բ Օր. 5:12-15): ***«Տէր Աստուած վեց օրում ստեղծեց երկինքն ու երկիրը, ծովն ու այն ամէնը, ինչ դրանց մէջ է, իսկ եօթներորդ օրը հանգստացաւ: Դրա համար էլ Տէրն օրհնեց եօթներորդ օրը եւ այն սուրբ հռչակեց»*** (Ելք 20:10-11): ***Շաբաթ*** կամ ***հանգիստ*** օրուայ մասին պատուերը բազմիցս կրկնւում է՝ իբրեւ մարդկանց եւ սրբագործող Տիրոջ միջեւ պայման, սրբութիւն, յաւիտենական ուխտ, որի խախտումի կամ պղծումի համար մահուան դատապարտութիւն էր սահմանւում: Իսկ պղծել ասուածի տակ հասկացւում էր հանգստեան այդ օրն աշխատելը, գործ անելը (Ելք 31:12-17; 35:2-3): Հնգամատեանի միւս գրքերն արդեն աւելի մանրամասն պատմում են, թէ ինչպէս են սահմանւում երեք մեծ տօները՝ Բաղարջակերացը, ամառուայ առաջին բերքը քաղելու, տարուայ վերջում հանդից բերքը հաւաքելու օրերը (Ելք 23:14-17), աւելի ուշ՝ Տաղաւարահարաց տօնը, Զատիկը եւն:

Թերեւս շատերին պիտի յետաքրքրի, թէ ամբողջ աշխարհում ինչո՞ւ են քրիստոնեաները շաբաթ օրուայ փոխարէն կիրակի օրը տօնականօրէն պատւում, Տիրոջ օր (յունարէն՝ Κυριακή) եւ հանգստի օր կոչում:

Մեր Տէր Յիսուս Քրիստոս կարեւորեց օրէնքը, բայց Իրեն կոչեց լրում եւ ամբողջացում օրենքի (Մատթ. 5:17): Նոր Կտակարանով բացայայտւում է օրէնքի բուն նպատակը, որն է՝ պատրաստութիւն ընդունելու Քրիստոսի սիրոյ օրէնքը եւ փրկութիւնը: Քրիստոսով տեղի ունեցաւ

Եթէ զապես քեզ «եւ սրբութեան օրը քո ուզածը չկատարես», այլ զբաղուես հոգեւոր ընթերցանութեամբ, աղօթքով, եկեղեցի գնաս եւ սուրբ պատարագին մասնակցես, օգնես աղքատներին ու կարօտեալներին, այցելես հիւանդ, բանտարկեալ, ծեր ու միայնակ մարդկանց, Աստծոյ ուզածն արած կլինես:

Եթէ* ուրախութեան եւ հանգստի այդ օրերը *«համարես Աստծուն նուիրուած եւ փառաւոր», հետեւաբար՝ ամէն բան Աստծոյ փառքի եւ մերձաւորի սիրուն ուղղուած անես, «ոտքդ դուրս չդնես գործի համար», որ մեծ մասամբ դրամ վաստակելուն է ուղղուած, այլ բարեգործութեամբ պատուես այս օրը, «քո բերանով բարկութեան ոչ մի խօսք չասես, այն ժամանակ կարող ես ապաւինել Տիրոջը» (Հմմտ՝ Ես.58:13):

Տիրոջ օրը սուրբ պահելու պատուիրանը խախտում են ոչ միայն կիրակի օրը եկեղեցի չգնացողները, այլեւ ակամայ կամ պարտադրաբար, ակումբային մտածողութեամբ եւ պճնամոլ զգեստներով այլոց երեւալու ձգտումն ունեն, նրանք, որոնք անտարբեր կանգնում են եկեղեցում՝ անհաղորդ աղօթքներին եւ սուրբ խորհուրդին, բամբասում են, շատախօսում կամ մտքերով այս ու այն կողմ թափառում: Ընդունելի չէ նաեւ աներկիւղ եւ անպատկառ կերպով հոգեւոր սպասաւորութիւն կատարելը, ոչ թէ Աստծոյ փառքի, այլ մարդահաճութեան, ցուցամոլութեան կամ ինքնամեխարման միտումով են երգում կամ աղօթում՝ գայթակղութիւն դառնալով ուրիշների համար:

Աւանդաբար բոլոր քրիստոնեայ երկրները շաբաթ երեկոյի դադարեցրել են առօրեայ կենցաղային բոլոր աշխատանքներն ու զբաղմունքները: Հոգեւոր ապրումի, Աստծոյ եւ միմեանց նկատմամբ սիրոյ պակասի արդիւնք է, որ անգամ աւանդական քրիստոնէական հասարակութիւններն են նահանջում այս կենցաղաւարութիւնից:

Եկէք մենք նախորդ սերունդներից ստացած եւ ապագա սերունդներին փոխանցուելիք մեր սիրոյ, աստուածպաշտութեան, հոգեւոր ապրումի եւ արժեքների մէջ ոչ թէ մարող, այլ նոր եռանդով դրանք ապրող, մեր եւ մեր զաւակների կեանքում ապրեցնող օղակ դառնանք, որպէսզի հաւատքով եւ վստահութեամբ ***ապաւինենք Տիրոջը, Ում փառք եւ երկրպագութիւն, յաւիտեանս յաւիտենից. Ամէն:***

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

DAILY BIBLE READINGS FOR 2025 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

27 January
Sts. Eugenius, Macarius, Valerius, Canditus and Aquila Zephaniah 3:19-20; 2 Corinthians 10:3-6; Matthew 10:23-33

28 January
Sts. Andrew the Commander and his Soldiers, and Callinicus and Diometes the Martyrs Proverbs 4:10-27; Isaiah 48:17-21; 2 Corinthians 10:3-6; Matthew 10:37-42

29 January
2 Timothy 2:20-26; John 6:48-55

30 January
Sts. Andrian and his wife Natalia, and Theodorus and Eleutherius the Martyrs Lamentations 3:22-56; Romans 8:18-27; John 16:1-4

31 January
2 Timothy 3:1-7; John 6:64-72

1 February
St. Gregory the Theologian Proverbs 8:33-36; Hosea 10:12; Amos 5:10-14; Acts 20:25-32; John 10:11-16

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Mirna and Manuel Kurdian for the souls of their Father who was also a loving Grandfather the late **MICHAEL JABBOUR** on the 40th day memorial service of his passing, also for all the old and new deceased members of the **JABBOUR** and **KURDIAN** families.

By Mr Sarkis and Mr Viken Krikorian and Families for the soul of their Mother who was also a loving Grandmother the late **NECTAR ELIAS KRIKORIAN** on the annual memorial of her passing, also for all the old and new deceased members of the **KRIKORIAN** Family.

By Mrs Olga and Sasha Farhadian, Mrs Helga, Michael, Grace and Luca Ioannou for the souls of Their Husband who was also a loving Father and Grandfather the late **JOHANES FARHADIAN** on the 40th day memorial service of his passing, also for all the old and new deceased members of the **FARHADIAN** and **IOANNOU** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

General

St Yeghiche Armenian Church is here to cater for all of your spiritual needs

Baptisms, Weddings, Baby Blessings, Home/Workplace Blessings, Seniors' Visitation, Hospitals/Home Visitation/Prayer, Funeral Service, Requiem, Grave Site Prayers, and more..

Please contact members of the Parish Council at Church every Sunday to request any of the above services. Alternatively, call Tel: 020 73738133 office, or write to Email: serices@styeghiche.org.uk

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan on 07548 777 147.

Hokehankist Requests: To request a requiem service and include details in our Sunday Bulletin, please contact us ***before Thursday Evening.*** Please contact Mr Viken Haladjian, or approach a member of Parish Council at church every Sunday after Badarak.

Tel: 020 7373 8133 office, 07970 146 280 mobile Email: services@styeghiche.org.uk

In Liu of Flowers: Friends and family of the deceased can make donations, in memory of their loved ones, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund.

Donations for prayers and annual membership contributions, in support of church's annual expenses, are welcome. Donations can be made;

-By a cheque made payable to "St Yeghiche Armenian Church Parish",
-By electronic bank transfer to "St Yeghiche Armenian Church Parish Ltd"
HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26
-By electronic card reader at the Church entrance.
-By QR Code directly to the Church PayPal or SumUp accounts.

PayPal
Scan. Pay. Go.

Scan to Pay

St Yeghiche Armenian Church is a UK Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.

Membership: St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk